

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2008 թվականի N 976 -Ն

936 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒ-
ԼԻՍԻ 29-Ի N 1149-Ն ՈՐՈՇՄԱՆ* ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության պարտադիր հավաստման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 12-ի N 239 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1149-Ն որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2008 թ. սեպտեմբերի 3
Երևան

* ԳՂՏ 2004 N 47 (346), 01.09.04

Հավելված
 ԳԳ կառավարության 2008 թվականի
 օգոստոսի 28-ի N 976 - Ն որոշման

«Հավելված N 1
 ԳԳ կառավարության 2004 թվականի
 հուլիսի 29-ի N 1149-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
 ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ**

Ապրանքախումբն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Արտադրանքի բնութագիրը
0407 00	Թռչնի ձու
110100	Ալյուր
1507 10 900, 1509 90 000, 1512 19 910, 1515 29 900	Սոյայի, ծիթապտղի, արևածաղկի, եգիպտացորենի յուղ (ծեթ)
1516, 1517	Կենդանական և բուսական ճարպեր, հիդրոգենիզացված յուղեր, մարգարին
1604-1605	Պատրաստի սննդամթերք՝ ձկնից և խեցգետնամաններից, կակղամորթներից և ջրային այլ անողնաշարավորներից
1701, 1702 90, 1703, 1704	Շաքար, շաքարից պատրաստված հրուշակեղեն կակաո չպարունակող
1805 00 000, 1806	Կակաոյի փոշի, շոկոլադ և կակաո պարունակող այլ սննդամթերք
1901 10 000	Մանկական սնունդ
1902-1905 (բացի 1905 90 300-ից)	Մակարոնային արտադրանք, ալրային հրուշակեղեն
2001-2008 (բացի 2002 90-ից, 2007 99-ից)	Մթերք ստացված բանջարեղենի, պտուղների (մրգերի), ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից
2101 - 2104	Տարբեր սննդամթերք, խմորիչ
2201 - 2209 00 (բացի 2202 90 100-ից, 2203 00-ից, 2208 20 120-ից, 2208 20 400-ից, 2208 20 620-ից, 2208 20 890-ից)	Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ, քացախ
2501 00 91	Կերակրի աղ
2707, 2710 (բացի 2710 11 410-ից, 2710 11 450-ից, 2710 11 490-ից, 2710 19 410-ից)	Նավթամթերք և յուղեր
3303 00-3306, 3307 10 000, 3307 20 000	Օծանելիք և հարդաջուր, կոսմետիկական, մազերի խմամքի, բերանի խոռոչի հիգիենայի, սափրվելու, հակաքրտնքային միջոցներ և հոտազերծիչներ
4014 90 100	Մանկական ծծակներ

6810 91	Երկաթբետոնե շինարարական կրող կոնստրուկցիաներ, պատրաստվածքներ բետոնից ամրանավորված կամ չամրանավորված
9018 31 100	Ներարկիչներ պլաստմասսայից, ասեղով կամ առանց ասեղի

»:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան